SCPEC
THE STATE COMMISSION
FOR THE PROTECTION OF ECONOMIC COMPETITION
OF THE REPUBLIC OF ARMENIA

RÉPUBLIQUE FRANÇAISE
Autorité
de la concurrence

ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵՎ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (ՀՀ ՏՄՊՊՀ), մի կողմից,

և Ֆրանսիայի Հանրապետության մրցակցային մարմինը, մյուս կողմից,

այսուհետ՝ Կողմեր,

ցանկություն հայտնելով խթանել համագործակցությունը մրցակցային քաղաքականության ոլորտում,

նպատակ ունենալով ստեղծել բարենպաստ պայմաններ երկկողմ հարաբերությունների զարգացման համար՝ հիմք ընդունելով հավասարության և փոխադարձ շահերի սկզբունքները,

հաշվի առնելով մրցակցային քաղաքականության դերը Կողմերի պետություններում շուկայական տնտեսության արդյունավետ զարգացման խթանման գործում,

կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. Հուշագրի նպատակը

Սույն Հուշագրի նպատակն է մրցակցային օրենսդրության կիրարկման, ինչպես նաև մրցակցության քարոզչության ոլորտում Կողմերի միջև համագործակցության ամրապնդումը:

2. Համագործակցության ընդհանուր խնդիրներ

Մրցակցային քաղաքականության ընդհանուր հարցերի համագործակցության կապակցությամբ Կողմերի նախաձեռնություններն իրենց ողջամիտ հնարավոր միջոցների սահմաններում ներառում են մասնավորապես հետևյալը.

1) ոչ գաղտնի տեղեկատվության փոխանակում այն գործերի վերաբերյալ, որոնք կարող են փոխադարձ հատաքրքրության առարկա հանդիսանալ Կողմերի համար,
2) միջոցառումներում Կողմերի ներգրավվածության աջակցում,
3) սեմինարների, համաժողովների, դասընթացների և նման այլ միջոցառումների կազմակերպում,
4) ուսումնական այցերի կազմակերպում,
5) փորձալրորդների (ստաժորների) ընդունում,
6) տնտեսական մրցակցության օրենսդրության, որոշումների, նախադեպային իրավունքի, ընթացակարգային ծանուցումների, տարեկան հաշվետվությունների և հասարակության համար հասանելի այլ համապատասխան նյութերի փոխադարձ մատչելիության ապահովում:

3. Խորհրդատվություններ

Եթե Կողմերից մեկը տեղեկացնում է մյուս Կողմին, որ վերջինիս կողմից իրականացված գործողությունները կարող են հետաքրքրության առարկա հանդիսանալ մյուս Կողմի մրցակցային օրենսդրության կիրարկման տեսանկյունից, ապա Կողմը կարող է դիմել ծանուցված Կողմին այդ գործողությունների վերաբերյալ խորհրդատվություններ անցկացնելու խնդրանքով:

Եթե Կողմերից մեկը ցանկություն է հատնում անցկացնել նման խորհրդաըվություններ, ապա մյուս Կողմը պետք է ապահովի խորհրդատվության անցկացումը:

4. Հանդիպումներ

Կողմերը կձգտեն, ըստ անհրաժեշտության հանդիպումներ կազմակերպել հետևյալ նպատակներով.

– քննարկել ընթացիկ հարցեր, փորձը և մրցակցային օրենսդրությունը, դրա կիրակմանն ու քարոզչությանը վերաբերող փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող նոր զարգացումները, ինչպես նաև սույն Հուշագրի շրջանակներում ընդգրկված այլ հարցեր.

– մրցակցային քաղաքականությանն առնչվող ընդհանուր հարցերի վերաբերյալ ոչ գաղտնի տեղեկատվության փոխանակում,

– մրցակցային քաղաքականության ոլորտում բազմակողմ նախաձեռնություններին առնչվող տեսակետների փոխանակում:

Կողմերը հնարավորություն ունեն հանդիպելու այն միջազգային միջոցառումների շրջանակներում, որոնց մասնակցում են երկուստեք:

5. Գաղտիության պահպանում

Սույն Հուշագրի շրջանակներում, ղեկավարվելով ազգային օրենսդրությամբ, Կողմերն ընդունում են գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը Կողմերի միջև փոխանակված ամբողջ տեղեկատվության նկատմամբ:

6. Ֆինանսական պայմաններ

Սույն Հուշագրի շրջանակներում ընդունող պետության տարածքում կազմակերպվող տարբեր միջոցառումներին և հանդիպումներին Կողմերի ներկայացուցիչների մասնակցության համար նախատեսված բոլոր, ներառյալ՝ ճանապարհածախսի, սննդի և կեցության ծախսերը հոգում է ուղարկող Կողմը:

7. Եզրափակիչ դրույթներ

Սույն Հուշագիրն ուժի մեջ է այն ստորագրելու պահից:

Սույն Հուշագրի գործողությունը դադարում է մյուս Կողմի գրավոր ծանուցումից վեց ամիս հետո:

Սույն Հուշագրի գործողության դադարեցումից հետո Կողմերը պարտավորվում են պահպանել սույն Հուշագրի շրջանակներում ստացված տեղեկատվության գաղտնիությունը:

Սույն Հուշագրի դրույթները չեն կարող ազդել Կողմերի այլ հուշագրերից բխող իրավունքների և պարտավորությունների վրա:

Սույն Հուշագրում փոփոխությունները և լրացումները կատարվում են

Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ՝ արձանագրություն կազմելու միջոցով, որը ստորագրվում է Կողմերի կողմից:

Սույն Հուշագիրը չի սահմանում որևէ իրավունքներ և պարտավորություններ Կողմերի միջև:

Ստորագրված է՝ 2012 թվականի մարտի 19 -ին, Երևանում: Սույն Հուշագիրը կազմված է հայերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով, յուքանչյուր լեզվով՝ երկու օրինակից, մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար: Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն լեզվով կազմված օրինակին:

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (ՏՄՊՊՀ)

Արտակ Շաբոյան
Նախագահ

Ֆրանսիայի Հանրապետության մրցակցային մարմին

Բրունո Լասեր
Նախագահ